ձեր ի յանդունդս անցէք։ Եւ ասէ վարդապետն. Ո՛վ մեծ իշխան պատուաւոր, քանզի մեծ ես և ծեր՝ մի՛ անիծեր զերկիր. պատիժ ունիս՝ ինձ արա՛յ և ոչ ազգիս, զի ի ներքոյ արեգական փոքրիկ հօտ մի եմք ընդ հովանեաւ թևոց ձերոց բնակեալ. ի գլուխ թագաւորին եւ քո՝ մեզ իրաւունս արա՛յ։ Եւ ի դուրս հանէ զնայ սրտմտութեամբ եւ հրամայէ ի ձեռն մունզուր աղայի պնդել զոտսն յերկաթս. եւ նստէր անդ աւուրս ԼԻ։ Եւ յորժամ լուաք՝ այլագունեցան երեսք մեր եւ գիշանայր գլուխ մեր եւ խելք մեր ցնդէին։ Ոմանք ի մէնջ յաղօթս կանխէին, ոմանք ի բողոք աղաղակի առ բարձրեալն՝ քաղցրացուցանել զսիրտ բռնաւորին զի մի վնասեսցէ ի բարկութեան ժամանակին. և ոմանք ի խորհուրդ վարանէին և այլք ի դրունս օճախին փութացան թէ ճար ի ձէնջ և յԱստուծոյ. սայ է զորմէ ասէաքն կանխագոյն։ Վասնզի երթայաք եւ գայաք ընդ Մարտիրոս վարդապետին թէ՛ ի քեհեա եէրին եւ թէ ի քեհապէկն բազում անգամ, մինչ զի ձանձրացեալք լինէին և ասէին. Համբերեցէ՛ք, զբանդ ձեր հոգացող եմք։ Նաև եէնկիչէր աղասուն ևս եմուտ Մարտիրոս վարդապետն և ամենեցուն ծանոյց, որք և սպասէին այսմ բանի լինել ամենայն օճախիւն. և Բ անգամ յիշեցին վէզիրին արգով և դրամով, և վէզիրն ոչ չէ ասաց և ոչ հա՛յ։ Այս ամենայն ի Ցայտնութենէ աւուրց մինչև ի բուն բարեկենդան լինէր երթևեկութիւն առ նոսա, մինչդեռ Եղիազարն ի թաքստի էր ի պաղչան։ Եւ այս որ եղև, յայտնեցաւ բանն, եւ օճախն ամենայն տէր կանգնեցան մեզ եւ նորա։ Եւ առաւօտուն աղան եւ քէհապէկն եւ ամենայն օճաղաղայքն, որպէս օրէն էր գալուստ իւրեանց առ վէզիրն, եկին անդ՝ եւ յետ բանից ասացին թէ Հայն այն յիրաւի փախեալ կայր ի Ճելալոց բանակէ եւ առ պարտէզ Մէհէմէտ աղային զամիսս երիս. եւ